

ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՍԱՉԱՅՆԱԳԻՐ

Անդամները,

նկատի ունենալով, որ Պունտա-դել-Էսթեի Հայտարարագրում Նախարարները համաձայնել են, որ «Առևտուրը սահմանափակող և խաթարող ներդրումային միջոցների հետևանքներին առնչվող ՄԱԳ-Հ Հոդվածների գործողությունը քննության առնելուց հետո քանակություններում պետք է մշակվեն համապատասխան հետագա դրույթներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ առևտրի վրա այդ բացասական հետևանքներից խուսափելու համար».

ցանկանալով օժանդակել համաշխարհային առևտրի ընդլայնմանը և աստիճանական ազատականացմանը և նպաստել միջազգային սահմաններով կատարվող ներդրումներին, որպեսզի բարձրացվի առևտրային բոլոր գործընկերների, հատկապես՝ զարգացող Անդամ երկրների տնտեսական աճը՝ միաժամանակ ապահովելով ազատ մրցակցություն.

հաշվի առնելով զարգացող Անդամ երկրների, հատկապես՝ առավել թույլ զարգացած Անդամ երկրների՝ առևտրային, զարգացման ու ֆինանսական առանձնահատուկ կարիքները.

ընդունելով, որ որոշ ներդրումային միջոցները կարող են առևտուրը սահմանափակող ու խաթարող հետևանքներ ունենալ.

սույնով համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1. Շրջանակներ

Սույն Համաձայնագիրը տարածվում է այն ներդրումային միջոցների վրա (սույն Համաձայնագրում հիշատակվում է որպես «ԱԱՆՄ-ներ»), որոնք առնչվում են միայն ապրանքների առևտրին:

Հոդված 2. Ազգային մոտեցում ու քանակական սահմանափակումներ

1. Առանց վնաս պատճառելու ՄԱԳ-Հ-1994-ով սահմանված այլ իրավունքներին ու պարտավորություններին, ոչ մի Անդամ չի կիրառում որևէ ԱԱՆՄ, որը հակասում է ՄԱԳ-Հ-1994-ի III Հոդվածի և XI Հոդվածի դրույթներին:

2. Այն ԱԱՆՄ-ների նկարագրական ցանկը, որոնք հակասում են ՄԱԳ-Հ-1994-ի III Հոդվածի 4-րդ կետով նախատեսված ազգային մոտեցման պարտավորությանը և ՄԱԳ-Հ-1994-ի XI Հոդվածի 1-ին կետով նախատեսված քանակական սահմանափակումների ընդհանուր վերացման պարտավորությանը, ընդգրկված է սույն Համաձայնագրի Հավելվածում:

Հոդված 3. Բացառություններ

ՄԱԳ-Հ-1994-ով սահմանված բոլոր բացառությունները համապատասխանաբար տարածվում են սույն Համաձայնագրի դրույթների վրա:

Հոդված 4. Չարգացող Անդամ երկրներ

Չարգացող Անդամ երկրներն ազատ են 2-րդ Հոդվածի դրույթներից ժամանակավորապես շեղվելու այն չափով և այնպիսի եղանակով, որով ՄԱԳ-Հ-1994-ի XVIII Հոդվածը, ՄԱԳ-Հ-1994-ի Վճարային հաշվեկշռի դրույթների մասին փոխհամաձայնությունը, 1979թ. նոյեմբերի 28-ին ընդունված՝ Վճարային հաշվեկշռի նպատակներով կիրառվող առևտրային միջոցների մասին հայտարարագիրը (BISD 26S/205-209) Անդամին թույլ են տալիս շեղվել ՄԱԳ-Հ-1994-ի III և XI Հոդվածների դրույթներից:

Հոդված 5. Ծանուցում և անցումային դրույթներ

1. ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրվա ընթացքում, Անդամները Ապրանքների առևտրի խորհրդին ծանուցում են իրենց կիրառած բոլոր ԱԱՆՄ-ների մասին, որոնք չեն համապատասխանում սույն Համաձայնագրի դրույթներին: Ընդհանուր կամ առանձնահատուկ կիրառման այդպիսի ԱԱՆՄ-ները ծանուցվում են իրենց հիմնական հատկանիշների¹ հետ մեկտեղ:

2. Յուրաքանչյուր Անդամ 1-ին կետի համաձայն ծանուցված բոլոր ԱԱՆՄ-ները վերացնում է ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ զարգացած Անդամ երկրների դեպքում երկու տարվա ընթացքում, զարգացող Անդամ երկրների դեպքում հինգ տարվա ընթացքում, առավել թույլ զարգացած Անդամ երկրների դեպքում յոթ տարվա ընթացքում:

3. Այն զարգացող Անդամ երկրի, ներառյալ՝ առավել թույլ զարգացած Անդամ երկրի համար, որը ցույց է տալիս սույն Համաձայնագրի դրույթների իրագործման հարցում իր ունեցած առանձնահատուկ

¹ Հայեցողական իրավասությամբ կիրառվող ԱԱՆՄ-ների դեպքում ծանուցվում է յուրաքանչյուր առանձնահատուկ կիրառման մասին: Կարիք չկա բացահայտելու այն տեղեկությունները, որոնք կարող են վնաս հասցնել առանձին ընկերությունների օրինական առևտրային շահերին:

դժվարությունները, Ապրանքների առևտրի խորհուրդը պահանջ լինելու դեպքում, կարող է երկարաձգել 1-ին կետի համաձայն ծանուցված ԱԱՆՄ-ների վերացման անցումային ժամկետը: Ապրանքների Առևտրի խորհուրդն այդպիսի պահանջի քննարկման ընթացքում հաշվի է առնում տվյալ Անդամի՝ զարգացման, ֆինանսական և առևտրային մասնավոր կարիքները:

4. Անցումային ժամանակաշրջանի ընթացքում Անդամը 1-ին կետի համաձայն ծանուցված որևէ ԱԱՆՄ-ի պայմանները չի փոփոխում՝ համեմատած ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը եղածների հետ, որպեսզի դրանով չմեծացվի 2-րդ Հոդվածի դրույթների հետ անհամապատասխանության աստիճանը: ԱԱՆՄ-ները, որոնք մտցվել են ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ավել, քան 180 օր առաջ, չեն օգտվում 2-րդ կետով նախատեսված անցումային դրույթներից:

5. Անկախ 2-րդ Հոդվածի դրույթներից, Անդամները 1-ին կետի համաձայն ծանուցված ԱԱՆՄ-ի ենթակա՝ ստեղծված ընկերություններին չվնասելու համար անցումային ժամանակաշրջանում կարող են նույն ԱԱՆՄ-ը կիրառել նոր ներդրման նկատմամբ, (i) երբ այդ ներդրման արդյունքում ստացված արտադրանքները նման են ստեղծված ընկերությունների արտադրանքներին, և՛ (ii) երբ անհրաժեշտ է խուսափել նոր ներդրման և ստեղծված ընկերությունների միջև մրցակցության պայմանները խաթարելուց: Նոր ներդրման նկատմամբ այդ կերպ կիրառվող ցանկացած ԱԱՆՄ-ի մասին ծանուցվում է Ապրանքների առևտրի խորհրդին: Այդպիսի ԱԱՆՄ-ի պայմաններն իրենց մրցակցային ազդեցության առումով պետք է համարժեք լինեն ստեղծված ձեռնարկությունների նկատմամբ կիրառվողներին, և այն պետք է վերացվի միևնույն ժամանակ:

Հոդված 6. Թափանցիկություն

1. ԱԱՆՄ-ների առնչությամբ Անդամները վերահաստատում են իրենց հավատարմությունը ՄԱԳՀ-1994-ի X Հոդվածով, 1979թ. նոյեմբերի 28-ին ընդունված՝ Ծանուցման, խորհրդատվության, վեճերի կարգավորման և հսկողության վերաբերյալ փոխհամաձայնության մեջ ընդգրկված «Ծանուցում» պարտավորությամբ, և 1994թ. ապրիլի 15-ին ընդունված՝ Ծանուցման ընթացակարգերի մասին նախարարական որոշմամբ սահմանված՝ թափանցիկության և ծանուցման պարտավորություններին:

2. Յուրաքանչյուր Անդամ Քարտուղարությունը ծանուցում է այն հրապարակումների մասին, որտեղից կարելի է տեղեկանալ ԱԱՆՄ-ների մասին, ներառյալ՝ իրենց տարածքներում գտնվող շրջանային ու տեղական կառավարությունների և իրավասու մարմինների կիրառած ԱԱՆՄ-ների մասին:

3. Յուրաքանչյուր Անդամ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերում տեղեկությունների համար ներկայացված պահանջների նկատմամբ և բավարար հնարավորություն է ընձեռում որևէ այլ Անդամի բարձրացրած՝ սույն Համաձայնագրից բխող ցանկացած հարցի շուրջ խորհրդակցությունների անցկացման համար: ՄԱԳՀ-1994-ի X Հոդվածի համաձայն ոչ մի Անդամից չի պահանջվում բացահայտել տեղեկություններ, որոնց բացահայտումը կխոչնդոտեր օրենքի կիրարկմանը կամ այլ կերպ կհակասեր հասարակական շահերին, կամ կվնասեր առանձին ընկերությունների՝ պետական թե՛ մասնավոր, օրինական առևտրային շահերը:

Հոդված 7. Առևտրին առնչվող ներդրումային միջոցների հարցերով հանձնախումբ

1. Սույնով ստեղծվում է Առևտրին առնչվող ներդրումային միջոցների հարցերով հանձնախումբ (սույն համաձայնագրում հիշատակվում է որպես «Հանձնախումբ»), որը բաց է բոլոր Անդամների համար: Հանձնախումբն ընտրում է իր նախագահին և փոխնախագահին և ժողովներ է գումարում ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, կամ, այլապես, ըստ ցանկացած Անդամի պահանջի:

2. Հանձնախումբը կատարում է Ապրանքների առևտրի խորհրդի կողմից իր վրա դրված պարտականությունները և Անդամներին հնարավորություն է տալիս խորհրդակցելու սույն Համաձայնագրի գործողության կամ իրականացման հետ կապված ցանկացած հարցի շուրջ:

3. Հանձնախումբը դիտանցում է սույն Համաձայնագրի գործողությունը և իրականացումը և այդ մասին տարին մեկ անգամ գեկուցում է Ապրանքների առևտրի խորհրդին:

Հոդված 8. Խորհրդակցություններ ու վեճերի կարգավորում

Վեճերի կարգավորման փոխհամաձայնությամբ մշակված ու ըստ դրա կիրառվող՝ ՄԱԳՀ-1994-ի XXII և XXIII Հոդվածների դրույթները տարածվում են սույն Համաձայնագրի համաձայն անցկացվող խորհրդակցությունների և վեճերի կարգավորման վրա:

Հոդված 9. Վերաքննություն

ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան հինգ տարի հետո, Ապրանքների առևտրի խորհուրդը վերաքննում է սույն Համաձայնագրի գործողությունը և անհրաժեշտության դեպքում՝ Նախարարական համաժողովին դրա տեքստում փոփոխություններ կատարելու առաջարկություններ է տալիս: Այդ վերաքննության ընթացքում Ապրանքների առևտրի խորհուրդը քննարկում է, թե արդյոք Համաձայնագիրը պետք է լրացվի ներդրումային քաղաքականության ու մրցակցության քաղաքականության վերաբերյալ դրույթներով:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ

1. ԱԱՆՄ-ները, որոնք չեն համապատասխանում ՄԱԳ-Հ-1994-ի III Հոդվածի 4-րդ կետով նախատեսված ազգային մոտեցման պարտավորությանը, ընդգրկում են այն միջոցները, որոնք պարտադիր են կամ կիրարկելի են համաձայն ներքին օրենսդրության կամ վարչական հրահանգների, կամ որոնց հետ համապատասխանությունն անհրաժեշտ է՝ առավելություն ստանալու համար, և որոնցով պահանջվում է, որ.

ա) ընկերությունը գնի կամ օգտագործի տեղական ծագում ունեցող կամ ցանկացած ներքին աղբյուրից ստացվող արտադրանքներ՝ անկախ այն բանից դրանք հատկորոշվում են առանձին արտադրանքների առումով, արտադրանքների ծավալի կամ արժեքի առումով, թե ներքին արտադրության ծավալների կամ արժեքի նկատմամբ ունեցած հարաբերակցության առումով, կամ՝

բ) ընկերության՝ ներմուծված արտադրանքների գնումները կամ օգտագործումը սահմանափակվի իր արտահանած տեղական արտադրանքների ծավալի կամ արժեքի հետ կապված որևէ չափով:

2. ԱԱՆՄ-ները, որոնք չեն համապատասխանում ՄԱԳ-Հ-1994-ի XI Հոդվածի 1-ին կետով նախատեսված քանակական սահմանափակումների ընդհանուր վերացման պարտավորությանը, ընդգրկում են այն միջոցները, որոնք պարտադիր են կամ կիրարկելի են համաձայն ներքին օրենսդրության կամ վարչական հրահանգների, կամ որոնց հետ համապատասխանությունն անհրաժեշտ է՝ առավելություն ստանալու համար, և որոնցով՝

ա) ընկերության կողմից իր տեղական արտադրության մեջ օգտագործվող կամ դրա հետ կապված արտադրանքների ներմուծումը սահմանափակվում է ընդհանրապես կամ իր արտահանած տեղական արտադրանքների ծավալի կամ արժեքի հետ կապված որևէ չափով.

բ) ընկերության կողմից իր տեղական արտադրության մեջ օգտագործվող կամ դրա հետ կապված արտադրանքների ներմուծումը սահմանափակվում է՝ ընկերության համար արտարժույթի մատչելիությունը նրան վերագրվող արտարժույթի ներհոսքի չափով սահմանափակելու միջոցով.

գ) սահմանափակվում է ընկերության կողմից արտադրանքների արտահանումը կամ արտահանման համար վաճառքը՝ անկախ այն բանից՝ դրանք հատկորոշվում են առանձին արտադրանքների առումով, արտադրանքների ծավալի կամ արժեքի առումով, թե իր տեղական արտադրության ծավալների կամ արժեքի նկատմամբ ունեցած հարաբերակցության առումով: